ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

5 մայիսի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

65
(2731)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԹԻՄԱԿԻՑՆԵՐԸ ԽԱԲԵԼ ԵՆ. ՄԱՍ 18

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է ներկայացնել, թե ՔՊ խմբակցության պատգամավոր Հասմիկ Հակոբյանը պատգամավոր դառնալուց հետո իր մտերիմներից, բարեկամներից ում է հասցրել աշխատանքի տեղավորել:

Արդեն գրել ենք, որ Հասմիկ Հակոբյանը պատգամավոր Ալեն Սիմոնյանի օգնականից պատգամավոր դառնալուց հետո հասցրել է հարազատ հորը՝ Արմեն Հակոբյանին տեղավորել ԱԺ-ում՝ աշխատանքի: Արմեն Հակոբյանը ԱԺ վարչատնտեսական վարչության ավտոտրանսպորտային բաժնում է աշխատում:

Մեզ հետ զրույցում հենց Հակոբյանը չէր հերքել այս տեղեկությունը:

Պատգամավորը, սակայն, այսքանով չի սահմանափակվել:

Հասմիկ Հակոբյանի քրոջ ամուսինը՝ Վարոն եւս աշխատում է ԱԺ-ում: Նա ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի վարորդն է:

Ստացվում է՝ ՀՀԿ-ի օրոք «ԽԾԲ»-ն մերժող այս իշխանությունը, ինչպես մյուս դեպքերում, այս հարցում եւս փորձում է հետ չմնալ նրանցից եւ տարբեր պաշտոնների, ու աշխատանքների են նշանակում իրենց մերձավորներին:

Խորհրդարանի որոշմամբ՝ մայիսի 2-ին Անդրանիկ Քոչարյանի ղեկավարած՝ 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովի գործունեության ժամկետը 6 ամսով երկարաձգվեց: Ըստ «ԱԺ կանոնակարգ» օրենքի՝ Քննիչ հանձնաժողովի լիազորությունների ժամկետը վեց ամիս է, որը կարող է երկու անգամ հանձնաժողովի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի որոշմամբ երկարաձգվել մինչեւ վեցական ամսով: Հանձնաժողովի գործունեության ժամկետը հոկտեմբերին արդեն մեկ անգամ երկարացվել էր: Այսինքն՝ սա վերջին անգամն է, որ հանձնաժողովի գործունեությունը երկարացվում է, իսկ արդեն 6 ամսից՝ հոկտեմբերին, քննիչ հանձնաժողովի վերջնական զեկույցը՝ պատերազմի հանգամանքների վերաբերյալ, պետք է արդեն պատրաստ լինի: Քննիչ հանձնաժողովի զեկույցը ներկայացվում է ԱԺ նախագահին, որից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, այն քննարկվում է Ազգային ժողովի հերթական նիստում: 44-օրյա պատերազմի ուսումնասիրման քննիչ հանձնաժողովը ստեղծվել է 2022 թ.-ի փետրվարի 10-ին: Քննությունն իրականացնում են միայն իշխանական պատգամավորները, իսկ ընդդիմությունը հենց սկզբից բոյկոտել է այն:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ քաղաքացի Տաթեւ Վիրաբյանը պատրաստվում է դիմում ներկայացնել Ազգային ժողով, որպեսզի ստեղծվի էթիկայի հանձնաժողով, եւ քննվի Ազգային ժողովի պատգամավոր Հովիկ Աղազարյանի պահվածքը: Այս մասին օրաթերթի հետ զրույցում հայտնել է հենց ինքը՝ Արցախի բնակիչ, լրագրող Տաթեւ Վիրաբյանը: Հիշեցնենք, որ ապրիլի 15-ին Անահիտ Վիրաբյան անուն-ազգանունով մի կին օգտատեր հայտարարեց, որ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանն իրեն սեռական բնույթի հայհոյանք է գրել «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում: Վիրաբյանն անպարկեշտ նամակը հրապարակել էր նաեւ սոցիալական ցանցի իր էջում: Եվ չնայած պատգամավորը հայտարարեց, թե իր էջը, կարծես թե, կոտրել են, սակայն փաստերը հրապարակված էին, իսկ Աղազարյանը հայհոյելու համար այդպես էլ պատասխանատվության չի ենթարկվել մինչ օրս: Եվ, ահա, Տաթեւ Վիրաբյանը գործուն քայլերի է դիմում:

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ Երեւան քաղաքի Օրբելի փողոցում գտնվող շենքի բնակարաններից մեկում հայտնաբերված շուրջ 12,5 կգ ընդհանուր քաշով ոսկին հանձնել են Կենտրոնական բանկին, ու քննությունը շարունակվում է: Ինչպես հայտնի է, անցած տարի Երեւան քաղաքի Օրբելի փողոցում գտնվող շենքի բնակարաններից մեկում հայտնաբերվել էր շուրջ 12,5 կգ ընդհանուր քաշով ոսկի: ՀՀ քննչական կոմիտեն հայտնել էր, որ քննչական, վարութային գործողությունների արդյունքում Երեւան քաղաքի երկու բնակչուհիներ վարույթն իրականացնող մարմին են ներկայացրել տարբեր վայրերում առանձին-առանձին թաքցված՝ մի դեպքում՝ 6 կիլոգրամ 860 գրամ քաշով, մյուս դեպքում՝ 5 կիլոգրամ 652 գրամ քաշով ամբողջական եւ մասնատված ենթադրաբար ոսկյա ձուլակտորներ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ոսկին պատկանել է ՀՀ դատախազությունում աշխատած նախկին պաշտոնյաներից մեկին: Նախկին դատախազը մահվանից առաջ տունը կտակել է դստերը, եւ նրա դուստրը երկար ժամանակ երկրում չի բնակվել: Ավելի ուշ դիմել է մաքրուհիների՝ խնդրելով՝ բնակարանը մաքրեն, որից հետո էլ բացահայտվել է այս դեպքը: Իսկ թե որտեղից դատախազին այդքան ոսկի, արդյոք մահացած դատախազինն է եղել, թե այլ անձի, որը հայտնվել է դատախազի տանը, պահել ոսկին, եւ այն գտել են մաքրուհիները, այժմ պարզում են իրավապահները:

ՎԱՅՆ ԵԿԵԼ Է, ՄԵՋ ՏԱՐԵԼ

ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՉԵՂԱՐԿԵԼ

Վաշինգտոնում երեկ ավարտվեց Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարներ Արարատ Միրզոյանի եւ Ջեյհուն Բայրամովի միջեւ բանակցությունների եզրափակիչ փուլը՝ ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի մասնակցությամբ: Թե ինչ են շուրջ երեք օր բանակցել կողմերը, հայտնի չէ, միայն վերջերս ԱԺ ամբիոնից Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ Վաշինգտոնում բանակցությունների սեղանին կա փաստաթուղթ, եւ վստահեցրեց, որ անակնկալներ այնտեղ չկան: Վաշինգտոնում ընթացող բանակցությունների վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Հայաստանի դեմոկրատական կուսակցության նախագահ Արամ Սարգսյանի հետ:

-Պարոն Սարգսյան, Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ Վաշինգտոնում կողմերը փաստաթղթի շուրջ են բանակցում: Ի՞նչ եք կարծում, ի՞նչ փաստաթուղթ է դա, ինչի՞ շուրջ են բանակցում Վաշինգտոնում:

-Առաջին հերթին, նման բանակցությունները չեն կարող համարվել բանակցություններ այն պատճառով, որ կողմերին պատանդավորել են Վաշինգտոնում՝ հանուն նրա, որ անպայման որեւէ համաձայնության գան: ԱՄՆ-ին հետաքրքիր չէ, թե ինչ պայմաններով, կարեւորը որ համաձայնության գան: Ի՞նչ կա այդ փաստաթղթում. ամերիկյան կողմը բացահայտ ասել է, որ կա էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության հարց: Դա նշանակում է, որ Հայաստանի իշխանությունները զրոյացրին արցախյան գոյամարտի ողջ արդյունքները, ազգային ազատագրական պայքարի ամբողջ արդյունքը. սա ամենագլխավոր խնդիրն է, որ դրված է մեր ազգի առջեւ. արդյոք մենք դա ընդունելո՞ւ ենք: Եթե Նիկոլ Փաշինյանն է ճանաչում Արցախն Ադրբեջանի մաս, դա դեռ ոչինչ, նրա ստորագրությունը կչեղարկվի, իսկ եթե ազգովի ենք ընդունում, որ Արցախի Հանրապետություն գոյություն չունի, գոյություն ունի միայն Արցախում բնակվող էթնիկ փոքրամասնություն, ուրեմն վայն եկել է, մեզ տարել:

-Ասում եք, որ եթե Փաշինյանը հիմա նոր փաստաթուղթ ստորագրի, ապա դա հնարավոր է չեղարկել հետագայում. ինչպե՞ս:

-Շատ պարզ. առաջինը՝ գոյություն ունի արարողակարգ. պետք է գնա Սահմանադրական դատարան, դա միջազգային փաստաթուղթ է դառնում, ինչից հետո պետք է գնա ԱԺ, որպեսզի վավերացվի: Նիկոլ Փաշինյանի ստորագրությունը դեռ ոչինչ չի նշանակում: Նա խախտել է 1992թ.-ի Հայաստանի Գերագույն խորհրդի որոշումը, որտեղ գրված է, որ որեւէ պաշտոնյա իրավասու չէ ստորագրել մի փաստաթուղթ, որը ճանաչում է Արցախն Ադրբեջանի մաս: Եթե Փաշինյանը նման փաստաթղթի տակ ստորագրում է, դառնում է քրեական հանցագործ: «Միասին» շարժումն ունի ներքին որոշում, որ օգտագործելու է բոլոր հնարավոր եւ անհնար միջոցները, որպեսզի այդ փաստաթուղթը կյանքի չկոչվի: Աշխարհը պետք է իմանա, որ Փաշինյանի ստորագրությունը զրո է, որեւէ նշանակություն չունի, հայ ազգը չի համակերպվելու դրա հետ:

-Պարոն Սարգսյան, տպավորություն է, որ կողմերն այլեւս հրաժարվում են նոյեմբերի 9-ի փաստաթղթից եւ նոր փաստաթուղթ են ցանկանում ստորագրել, որպեսզի հետագա բանակցություններն ըստ այդ փաստաթղթի շարունակեն:

-Այդպես էլ կա, դրա համար էլ մենք ասում ենք, որ նոյեմբերի 9-ի փաստաթուղթը, իհարկե, մեր սրտով չէ, կապիտուլյացիա էր, բայց այնտեղ գոնե պահպանվում էր Արցախի Հանրապետության շահը եւ իրավունքները՝ որպես Ադրբեջանից անկախ օբյեկտ: Այս պարոնի (Նիկոլ Փաշինյանի) արածը եթե դա է, ուրեմն ինքը փորձում է ամբողջովին չեղյալ համարել բոլոր պայմանավորվածությունները, Մինսկի խմբի աշխատանքները եւ զրոյից է սկսում ամեն բան՝ ի վնաս Հայաստանի եւ Արցախի հանրության: Փաշինյանը Քաջ Նազարի նման գլուխ գովաց, թե նոր փաստաթուղթ է ստորագրելու. տեսնենք՝ ինչ է սպասվում իրեն այդ փաստաթղթի ստորագրումից հետո:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՀԱՆԴԻՊՄԱՆ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼ

Երեկ Վաշինգտոնում կայանալու էր Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարներ Արարատ Միրզոյանի եւ Ջեյհուն Բայրամովի միջեւ բանակցությունների եզրափակիչ փուլը՝ ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի մասնակցության:

Թե ինչ են շուրջ երեք օր բանակցում կողմերը, հայտնի չէ, միայն մայիսի 3-ին ԱԺ ամբիոնից Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ Վաշինգտոնում բանակցությունների սեղանին կա փաստաթուղթ, եւ վստահեցրեց, որ անակնկալներ այնտեղ չկան:

Արցախում տեղյա՞կ են արդյոք, թե ինչի շուրջ են բանակցում Վաշինգտոնում, կամ ի՞նչ սպասելիքներ ունեն վաշինգտոնյան բանակցություններից. այս հարցերի շուրջ ArmLur.am-ը զրուցել է Արցախի նախագահի խորհրդական Դավիթ Բաբայանի հետ, որն էլ մեզ հետ զրույցում նշեց՝ Արցախում բանակցային բոլոր կողմերից ակնկալում են հստակ դիրքորոշում՝ ինչպես են տեսնում Արցախի ապագան.

«Ակնկալում ենք հստակ պատասխան Երեւանից, Մոսկվայից, Վաշինգտոնից եւ Փարիզից. թող ասեն՝ ինչպես են պատկերացնում խնդրի լուծումը: Պատասխան ենք ակնկալում նաեւ հայ հանրությունից, տեսնենք՝ ինչ են մտածում Արցախի մասին: Ինքնության հարցն է մեր բարձրացվել, պետք է տեսնենք՝ Արցախը ծնողներ, երբայրներ, քույրեր ունի, թե որբ է»,-ասում է Բաբայանը:

ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

«Կոնդի առանձնատների տնտեսություն» ՊՈԱԿ-ը կվերանվանվի: Որոշումը կայացվել է կառավարության երեկվա նիստի ժամանակ: Նախագծով առաջարկվում է «Կոնդի առանձնատների տնտեսություն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունը վերանվանել «Կառավարական առանձնատների տնտեսություն» պետական ոչ առեւտրային կազմակերպություն: Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ ՊՈԱԿ-ի գործունեության առարկան եւ հիմնական նպատակը ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց ծառայողական առանձնատների սպասարկումն ու շահագործումն է, ինչպես նաեւ ծառայողական առանձնատներում բնակվող պաշտոնատար անձանց կեցության եւ սննդի սպասարկումն ու ապահովումը: ՊՈԱԿ-ի ներկայացուցիչները երրորդ անձանց հետ հարաբերվելիս գործնականում հաճախակի բախվում են իրավիճակի, երբ կազմակերպության անվանման հնչեցումը որեւէ կերպ չի արտացոլում կազմակերպության նպատակները, հնարավորություն չի տալիս նույնացնել կազմակերպությանը, տարընկալումների տեղիք է տալիս:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ԽՈՍՏՈՒՄԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ Է՝ ՀԵՏԱՁԳՎՈՒՄ Է

2023թ.-ի փետրվարին Հանրային հեռուստաընկերության եթերում էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը հայտարարեց, որ մոտակա մեկ ամսում Հայաստանում իր գործունեությունը կսկսի ծավալել աշխարհահռչակ բրիտանահոլանդական Shell ընկերությունը:

«Մարտ ամսին ընկերությունը կբացի 3 բենզալցակայան, եւ դրանք կլինեն նոր, ժամանակակից բենզալցակայաններ»,- խոստացավ նախարարը:

Նախարարի այս խոստումից անցել է ավելի քան 2 ամիս, սակայն բենզալցակայանները դեռեւս չեն բացվել: Իսկ ապրիլի 21-ին նախարարը ֆեյսբուքյան գրառմամբ տեղեկացրեց, որ կայանները շուտով կսկսեն աշխատել:

«Փաստերի ստուգման հարթակ»-ի հարցին, թե ինչու մարտին խոստացված բենզալցակայանները դեռ չեն բացվել, էկոնոմիկայի նախարարությունից խորհուրդ տվեցին դիմել հենց ընկերությանը, քանի որ «դա մասնավոր ընկերություն է, եւ նրանց գործունեության հետ կապված ռիսկերն ու խնդիրները պետությունը չի կարող կառավարել»:

Ընկերությունից էլ տեղեկացրին, որ այս պահին ավարտական փուլում է թվով երեք բենզալցակայանների շահագործումը, դրանց վրա վերջին նախապատրաստական աշխատանքներն են կատարվում, եւ սպասում են ապրանքի ներմուծմանը:

Ընկերությունից տեղեկացրին նաեւ, որ նախարարի՝ մարտ ամսին բենզալցակայանները բացելու խոստման հիմք էր հանդիսացել իրենց տրամադրած տեղեկատվությունը:

Ի դեպ, սա Shell ընկերության՝ բենզալցակայաններ բացելու խոստման երկրորդ հետաձգումն է: Առաջին անգամ այս խոստումը Քերոբյանը տվել էր նաեւ մեկ տարի առաջ՝ 2022-ի մայիսին: Այն ժամանակ էլ նախարարը խոստացել էր մինչեւ 2022թ.-ի աշուն Հայաստանում գործարկել բենզալցակայանների ցանցը:

Այսպիսով, փաստենք, որ էկոնոմիկայի նախարարի խոստումը երկու անգամ հետաձգվում է, իսկ պատճառների մասին հարցնելիս նախարարությունից հորդորում են դիմել մասնավոր ընկերությանը:

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՄԵԿՆԵԼ

Երեկ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայկական պատվիրակությամբ մեկնել է Չեխիա: ArmLur.am-ը տեղեկացավ, որ պատվիրակության կազմում ընգրկված են 27 անձ, այդ թվում՝ Զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ: Պատվիրակության կազմում է ընդգրկված նաեւ Փաշինյանի կինը՝ Աննա Հակոբյանը: Չեխիա մեկնող մյուս պաշտոնյաներն են Ազգային ժողովի պատգամավորներ Արփինե Հովհաննիսյանը, Արփի Դավոյանը, արտաքին գործերի նախարարի տեղակալ Պարույր Հովհաննիսյանը, էկոնոմիկայի նախարարի տեղակալը, նաեւ աշխատակազմի այլ ներկայացուցիչներ եւս:

ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ԿՍՏԱՆԱՆ

Պետությունը կփոխհատուցի 2020 թվականի 44-օրյա պատերազմի ընթացքում մարտական գործողությունների մասնակից ուսանողների, ինչպես նաեւ պատերազմի ընթացքում մարտական գործողությունների մասնակից անձանց երեխաների ու ամուսինների ուսման վարձերը: Փոխհատուցման հերթական փուլի որոշումն ընդունվել է ՀՀ կառավարության երեկվա՝ մայիսի 4-ի նիստում:

Ներկայացված նախագծի համաձայն՝ 2022 թվականի դեկտեմբերի 22-ից մինչեւ 2023 թվականի մարտի 30-ն ընկած ժամկետում ԿԳՄՍ նախարարությունում բուհերի կողմից ներկայացվել են 59 ուսանողի տվյալներ, որոնց ուսման վարձի փոխհատուցման գումարի չափը կազմում է 16 344 800 դրամ:

Նշենք, որ փոխհատուցումը գործում է 2021թ.-ից, եւ ամեն տարի որոշման ժամկետը երկարացվում է:

2022 թվականին փոխհատուցում է ստացել 1613 ուսանող, ուսման վարձի փոխհատուցման գումարը կազմել է 382 մլն դրամ:

ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐԸ ԿՄԱՄՆԱՎՈՐԵՑՎԵՆ

«Ավտոմատիկա» ՓԲԸ-ի՝ պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը կմասնավորեցվեն: Այս մասին որոշում է կայացվել կառավարության երեկվա նիստի ժամանակ: Նշենք, որ «Ավտոմատիկա» ՓԲԸ-ն նախկինում ՊՆ պատվերներով իրականացրել է տեխնիկայի նորոգման եւ արդիականացման աշխատանքներ: Ներկայացված հիմնավորման մեջ նշվում է, որ կատարվել են ուսումնասիրություններ, եւ ՊՆ-ն եկել է եզրահանգման, որ «Ավտոմատիկան» չի համապատասխանում պահանջներին: Ընկերության շենք-շինությունների մակերեսը կազմում է 12 997.6 քմ, զբաղեցված հողատարածքը կազմում է 1.977 հա, որը հանդիսանում է ընդհանուր բաժնային սեփականություն: Նախագծով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, որոշվել է 445 մլրդ դրամ արժեքով վաճառել ընկերության ոչ պետական բաժնեմասի սեփականատիրոջը՝ «ՌԱՖԷԼԳՐԻԳ» փակ բաժնետիրական ընկերությանը: Նախագծով նախատեսված՝ «Ավտոմատիկա» ՓԲԸ-ի պետական բաժնետոմսերի վաճառքի գնի 70 տոկոսը պետք է ուղղվի ՀՀ պետական բյուջե, իսկ 30 տոկոսը պետք է ուղղվի համապատասխան համայնքի ֆոնդային բյուջե՝ ըստ գույքի գտնվելու վայրի:

ԱՆԴՐԱԴԱՐՁԵԼ Է

ԱԼԻԵՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը երեկ հայտարարել է, որ Լեռնային Ղարաբաղը հակամարտային կամ վիճելի տարածքի միջազգային կարգավիճակ ունի, բայց Ադրբեջանի մաս չէ: Հարությունյանը հարցազրույց է տվել «Արմենպրես» պետական լրատվական գործակալությանը: «Արցախի Հանրապետությունը (ԼՂՀ-ն) դե-ֆակտո կայացել է 1992-94 թվականներին Ղարաբաղյան առաջին պատերազմում ձեռք բերած հաղթանակի արդյունքում: Միջազգայնորեն ճանաչվել է ԼՂՀ-ի ու Ադրբեջանի զինված ուժերի ուժման գիծը: Միջազգային բանակցություններում ցայսօր չկա ոչ մի պայմանավորվածություն ինչպես ԼՂՀ կարգավիճակի, այնպես էլ ԼՂՀ-ի ու Ադրբեջանի սահմանազատման գծի շուրջ: Կարգավիճակի շուրջ որեւէ համաձայնություն չկա նաեւ 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունում, ինչը նշանակում է, որ Լեռնային Ղարաբաղը շարունակում է ունենալ հակամարտային կամ վիճելի տարածքի միջազգային կարգավիճակ, բայց ոչ երբեք Ադրբեջանի մաս»,- ասել է Հարությունյանը:

Բաքուն քանիցս Երեւանից է պահանջել ճանաչել Լեռնային Ղարաբաղը որպես Ադրբեջանի մաս: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւն իր հերթին պդնել է, որ այժմ ժամանակն է, որ Հայաստանի ղեկավարն ինքն իր հայտարարությունը խմբագրի եւ հայտարարի «Ղարաբաղն Ադրբեջան է»: Հարությունյանն ասել է, որ միջազգային հանրությունն ի սկզբանե արձանագրել է Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի շուրջ տարաձայնությունների առկայության փաստը:

«Այդ պետությունների ինքնիշխանությունը ԵԱՀԿ-ի կողմից ճանաչվել էր այն պայմանով, որ նրանք իրենց հերթին ճանաչում են Լեռնային Ղարաբաղի պատկանելության շուրջ տարաձայնությունների առկայության փաստը եւ համաձայնում են, որ Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակը որոշվելու է ԵԱՀԿ հովանու ներքո անցկացվելիք խաղաղության համաժողովի ժամանակ: Երկու պետություններն էլ տվել են նման համաձայնություն՝ դրանով իսկ ընդունելով Լեռնային Ղարաբաղի՝ վիճելի տարածքի միջազգային կարգավիճակը եւ ստանձնելով հիմնախնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու պարտավորություն», - նշել է Արցախի նախագահը: «Դա փաստում է, որ Հայաստանի ու Արցախի իշխանությունները տարաձայնություններ ունեն»:

Կառավարության նախորդ տարվա ծրագրի կատարման զեկույցը խորհրդարանում ներկայացնելիս վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր, որ Հայաստանը ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, նույնն էլ ակնկալում է Ադրբեջանից: Իսկ թե ինչպես է պատկերացնում Արցախի ճակատագիրը, ողջ նիստի ընթացքում Հայաստանի ղեկավարն այդպես էլ չէր հստակեցրել: Փոխարենը շեշտել էր, թե Հայաստանի նախորդ իշխանություններն արդեն ճանաչել են Արցախը Ադրբեջանի կազմում Մադրիդյան փաստաթղթով:

Հարությունյանն ընդգծում է՝ նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության մեջ ոչ մի խոսք չկա Արցախի ապառազմականացման եւ այնտեղից սեփական զինված ուժերի դուրսբերման մասին:

«Մինչդեռ, բացի եռակողմ հայտարարությամբ ստանձնած պարտավորությունների չկատարումից, հենց Ադրբեջանն է շարունակել ագրեսիվ գործողությունները՝ սկսելով գրավված եւ հանձնված տարածքների անզուսպ ռազմականացումը, պայմաններ ստեղծելով Արցախի ու Հայաստանի դեմ հետագա նախահարձակ գործողությունների համար»,- նշել է Հարությունյանը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԱՅՑ՝ ՋՈՐԱՄԱՍԵՐ

Մայիսի 4-ին ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը վաղ առավոտյան անակնկալ ստուգայցով եղել է ՊՆ N զորամասերում:

Պաշտպանական գերատեսչության ղեկավարը հրամանատարական կազմերի ուղեկցությամբ շրջել է զորամասերի տարածքով, հետեւել օրվա կարգացուցակով սահմանված միջոցառումների իրականացման ընթացքին, զորանոցային պայմաններին եւ տվել համապատասխան հանձնարարականներ:

Ստուգայցի շրջանակում նախարարը հանդիպել է նաեւ մարտական հերթապահության պատրաստվող ժամկետային զինծառայողների հետ:

Պաշտպանության նախարարը շրջել է զորամասերի տարածքում նոր կառուցվող շենք-շինություններում, հետեւել շինարարական աշխատանքների ընթացքին:

Նախարար Պապիկյանն այցելել է նաեւ առաջնագիծ, հետեւել ինժեներական, դիրքերի կահավորման աշխատանքների ընթացքին:

ԵՐԿԿՈՂՄ ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Սեւծովյան տնտեսական համագործակցության խորհրդարանական վեհաժողովի շրջանակում ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը մայիսի 4-ին Անկարայում հանդիպել է Սերբիայի խորհրդարանի նախագահ Վլադիմիր Օրլիչին. տեղեկացնում են ՀՀ ԱԺ-ից:

ՀՀ ԱԺ նախագահն ընդգծել է երկկողմ միջխորհրդարանական համագործակցության անհրաժեշտությունը՝ նշելով օրենսդիր մարմինների միջեւ ակտիվ երկխոսությունը եւ բարեկամական խմբերի դերը:

Ալեն Սիմոնյանը ներկայացրել է հետպատերազմյան իրավիճակի ժամանակագրությունը՝ շեշտելով, որ տարածաշրջանում խիստ անկայուն իրավիճակի համատեքստում կարեւոր է ԵՄ քաղաքացիական դիտորդական առաքելության դերը: Ալեն Սիմոնյանը վերահաստատել է Հայաստանի մոտեցումները Կոսովոյի կարգավիճակի վերաբերյալ:

Սերբ գործընկերը նշել է, որ խաղաղությունն իրենց երկրի համար կարեւոր արժեք է, եւ ամենօրյա բանաձեւ են դարձել խաղաղության պահպանման համար ծախսվող էներգիան եւ ներդրվող ջանքերը: Նա նշել է, որ խաղաղասիրությունն այն գլխավոր նախադրյալն է, որը բնորոշում է Հայաստանին եւ Սերբիային, ինչի հիմքով էլ պետք է շարունակել համագործակցությունը: Հանդիպման ավարտին ՀՀ ԱԺ նախագահը գործընկերոջը պաշտոնական այցով հրավիրել է Հայաստան:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՄԲ ՀԱՓՇՏԱԿՎԵԼ ԵՆ ՀՈՂԱՄԱՍԵՐ

Գ.Մ.-ն, Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում (այսուհետ՝ Կոմիտե) երկար տարիներ զբաղեցնելով տարբեր պաշտոններ, մտերիմ հարաբերություններ ձեւավորելով Կոմիտեի այլ պաշտոնատար անձանց հետ, 2017-2021 թվականների ընթացքում խարդախությամբ հափշտակել է 4 մլրդ 233 մլն 57 հազար 363 դրամ արժեքով՝ Երեւան քաղաքի տարբեր վարչական շրջաններում գտնվող 13 պետական եւ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասեր՝

• Երեւան քաղաքի Աջափնյակ Գ-1 թաղամասում գտնվող, 3550 քմ մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, առանձնապես խոշոր չափերով՝ 10 մլն 437 հազար դրամ կադաստրային արժեքով հողամասը,

• Կառավարության 24.12.2009 թվականի թիվ 1517-Ն որոշմամբ սեփականության իրավունքով անհատույց Երեւան համայնքին փոխանցված, Երեւան քաղաքի Գ-1 թաղամասում գտնվող, 4000 քմ մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, առանձնապես խոշոր չափերի՝ 11 մլն 760 հազար դրամ կադաստրային արժեքով հողամասը,

• Երեւան քաղաքի Աջափնյակ Գ-1 թաղամասում գտնվող, 8405 քմ մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, առանձնապես խոշոր չափերով՝ 24 մլն 710 հազար 700 դրամ կադաստրային արժեքով հողամասը,

• Կառավարության 24.12.2009 թվականի թիվ 1517-Ն որոշմամբ սեփականության իրավունքով անհատույց Երեւան համայնքին փոխանցված, Երեւան քաղաքի Աջափնյակ՝ Լուկաշինի փողոցին հարող տարածքում գտնվող 12.860 քմ մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, առանձնապես խոշոր չափերի՝ 37 մլն 133 հազար 250 դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով հողամասը,

• Կառավարության 24.12.2009 թվականի թիվ 1517-Ն որոշմամբ սեփականության իրավունքով անհատույց Երեւան համայնքին փոխանցված Երեւան քաղաքի Շենգավիթ, Արտաշատի խճուղում գտնվող 5000 քմ մակերեսով, գյուղատնտեսական նշանակության, առանձնապես խոշոր չափերի՝ 14 մլն 700 հազար դրամ կադաստրային արժեքով հողամասը,

• նույն որոշմամբ սեփականության իրավունքով անհատույց Երեւան համայնքին փոխանցված, Երեւան քաղաքի Նորք-Մարաշ, Գ.Հովսեփյան փողոցում գտնվող 2080 քմ մակերեսով, բնակավայրերի (տնամերձ) նպատակային նշանակության, առանձնապես խոշոր չափերի՝22 մլն 276 հազար 800 դրամ կադաստրային արժեքով հողամասը,

• Երեւան Կենտրոն, Ծիծեռնակաբերդի խճուղում գտնվող 12.400 քմ մակերեսով, հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության, առանձնապես խոշոր չափերով՝730 մլն 462 հազար 920 դրամ կադաստրային արժեքով հողամասը,

• Երեւան քաղաքի Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան փողոցին հարող տարածքում գտնվող 6.640 քմ մակերեսով, անտառային նպատակային նշանակության, առանձնապես

խոշոր չափերով՝ 254 մլն 244 հազար 936 դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով հողամասը,

• Երեւան քաղաքի Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան փողոցում գտնվող, 9.420 քմ մակերեսով, անտառային նպատակային նշանակության, առանձնապես խոշոր չափերով՝ 360 մլն 690 հազար 858 դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով հողամասը,

• Երեւան քաղաքի Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան փողոցում գտնվող, 7090 քմ մակերեսով, բնակավայրերի (այլ) նպատակային նշանակության, առանձնապես խոշոր չափերի՝ 417 մլն 659 հազար 847 դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով հողամասը,

• Երեւան քաղաքի Նորք-Մարաշ, Գ.Հովսեփյան փողոցին հարող տարածքում գտնվող 16.870 քմ մակերեսով, անտառային նպատակային նշանակության, առանձնապես խոշոր չափերով՝ 645 մլն 950 հազար 613 դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով հողամասը,

• Կառավարության 24.12.2009 թվականի թիվ 1517-Ն որոշմամբ սեփականության իրավունքով անհատույց Երեւան համայնքին փոխանցված, Երեւան քաղաքի Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան փողոցին հարող տարածքում գտնվող 17.730 քմ մակերեսով, բնակավայրերի (այլ) նպատակային նշանակության, առանձնապես խոշոր չափերի՝ 1 մլրդ 44 մլն 444 հազար 159 դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով հողամասը,

• Երեւան քաղաքի Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան փողոցին հարող տարածքում գտնվող, 17.200 քմ մակերեսով, անտառային նպատակային նշանակության, առանձնապես խոշոր չափերով՝658 մլն 586 հազար 280 դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով հողամասը:

Հակակոռուպցիոն կոմիտեում վարույթի նախաքննությամբ պարզվել է, որ նշված ժամանակահատվածում Գ.Մ.-ն պետական եւ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի նկատմամբ իրավունք ձեռք բերելու շուրջ հանցավոր համաձայնության է եկել իր հետ մտերիմ հարաբերությունների մեջ գտնվող մի շարք անձանց հետ, տարբեր քաղաքացիների անվամբ կեղծ փաստաթղթերի միջոցով հողամասեր գրանցելու նպատակով ստացել է նրանց անձնագրերի պատճենները, անհրաժեշտ այլ տվյալներ եւ դեռեւս չպարզված հանգամանքներում եւ անձանց միջոցով կազմել է հողամասերի կեղծ կադաստրային գործեր:

Կադաստրային գործերում, ի թիվս այլնի, ներառվել են Երեւանի քաղաքապետի կեղծ որոշումներ, հողամասի առուվաճառքի կեղծ պայմանագրեր, վճարման կեղծ անդորրագրեր, անշարժ գույքի պետական գրանցում կատարելու վերաբերյալ կեղծ դիմումներ, սեփականության իրավունքի կեղծ վկայականներ եւ այլ փաստաթղթեր, համաձայն որոնց՝ իբր Երեւանի քաղաքապետի տարբեր որոշումների հիման վրա՝2000-ական թվականներին կնքված առուվաճառքի պայմանագրերով հողամասերն օտարված են եղել ՀՀ տարբեր քաղաքացիների: Այնուհետեւ այդ կադաստրային կեղծ գործերը դեռեւս չպարզված հանգամանքներում տեղադրվել են Կոմիտեի արխիվում, մի շարք դեպքերում համապատասխան մատյանների իրական էջերը փոխարինվել են կեղծ գրառումներ պարունակող թերթերով կամ, ընդհանրապես, հեռացվել են: Վերոնշյալ արարքները կատարելուց հետո Գ.Մ.-ն, մտերիմ հարաբերությունների մեջ գտնվելով Կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման արխիվի բաժնի պետի թափուր պաշտոնը ժամանակավորապես զբաղեցնող Հ.Մ.-ի, ինչպես նաեւ դեռեւս չպարզված այլ պաշտոնատար անձանց հետ, Հ.Մ.-ին համոզելու եղանակով դրդել է նրան չարաշահել պաշտոնեական լիազորությունները: Մասնավորապես՝ Գ.Մ.-ն Հ.Մ.-ին խնդրել է չկատարել պաշտոնի անձնագրից բխող աշխատանքային պարտականությունները, չհամեմատել կեղծ կադաստրային գործերի թղթային եւ էլեկտրոնային տարբերակները եւ գրանցման էլեկտրոնային համակարգում մուտքագրել իր կողմից մատնանշված ապօրինի կադաստրային գործերը: Արդյունքում Կոմիտեի գրանցման էլեկտրոնային «ARPIS» համակարգում տեսաներածվել (սկանավորվել) եւ մուտքագրվել են կեղծ կադաստրային գործեր, համաձայն որոնց՝ վերոնշյալ հողամասերի նկատմամբ իրավունք են ունեցել Գ.Մ.-ի ներկայացրած անձինք, ինչի հետեւանքով Գ.Մ.-ին եւ նրա հետ հանցավոր համաձայնության եկած անձանց հնարավորություն է տրվել փաստացի տնօրինել եւ օգտագործել այդ հողամասերը: Որոշ դեպքերում հափշտակված հողամասերը հետագայում օտարվել են տարբեր անձանց: Քրեական վարույթով հսկող դատախազի կողմից քրեական հետապնդումներ են հարուցվել Գ.Մ.-ի, Կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման արխիվի բաժնի պետի թափուր պաշտոնը ժամանակավորապես զբաղեցնող Հ.Մ.-ի, Գ.Մ.-ի հետ խմբի կազմում հողամասերը հափշտակած եւ հափշտակությանն օժանակած 10 անձանց նկատմամբ: 6 մեղադրյալների մասով հայտարարվել է նախաքննության ավարտ: Միաժամանակ, դատախազությունում, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակներում, միջոցներ են ձեռնարկվել հափշտակված գույքերը համայնքին եւ պետությանը վերադարձնելու ուղղությամբ. Գլխավոր դատախազությունը հայցեր է հարուցել Վարչական դատարան:

ՀՖՖ ՆԱԽԱԳԱՀ

ԿԱԼԱՆՔ՝ ՉԵՄՊԻՈՆԻ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎՐԱ

Ինչպես փոխանցում է «Դատալեքս» կայքը, այսօր դատավոր Լիզա Գրիգորյանի նախագահությամբ տեղի է ունենալու դատական նիստ, որն իր էությամբ աննախադեպ է: Բանն այն է, որ ռուսաստանաբնակ գործարար, բարերար, Հայաստանի բազմակի չեմպիոն ու գավաթակիր Երեւանի «Փյունիկ»-ի սեփականատեր Արթուր Սողոմոնյանի դեմ դատական հայց է ներկայացրել, ոչ ավել, ոչ պակաս, ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահը: Հետաքրքրականն այն է, որ ժամանակ առ ժամանակ սկանդալների կենտրոնում հայտնվող, նույնիսկ ուղղակի թուրքական կողմին որոշակի ծառայություններ մատուցելու համար մեղադրված ՀՖՖ նախագահ Արմեն Մելիքբեկյանը ցանկացել է, որպեսզի դատարանը կալանք դնի Սողոմոնյանի հաշիվների վրա հայցադիմումով պահանջվող գումարի չափով, ինչն անուղղակի նշանակում է փորձել վնաս տալ նաեւ «Փյունիկ» ֆուտբոլային ակումբին: Այն, որ ՀՖՖ ղեկավարության գործուն ջանքերի «շնորհիվ» այսօր ազգային հավաքականում չէ ամենահայտնի հայը՝Հենրիխ Մխիթարյանը, եւ այն, որ ազգային հավաքականները մեծամասամբ խայտառակ ելույթներ են ունենում՝ կրելով պարտություն պարտությունների հետեւից, դեռ քիչ է. մինչեւ վերջերս իշխանությունների անվերապահ վստահությունը վայելած Արմեն Մելիքբեկյանն ու Արմեն Նիկողոսյանը ձգտում են, որ «անպատիժ» չմնա նաեւ հայկական ֆուտբոլում սեփական միջոցներից հսկայական գումարներ ծախսած Արթուր Սողոմոնյանը, ու փորձում են հասնել նրան, որ վերջինս փակի հարյուրավոր աշխատատեղեր Հայաստանում եւ հեռանա: Ֆուտբոլային մեր աղբյուրները պնդում են, որ բացարձակ ապաքաղաքական այս մարդու հետ խնդիրներն առաջացել են այն պահից, երբ վերջինս սկսել է խոսել ֆուտբոլում տիրող անառողջ բարքերից եւ փորձել ՀՖՖ-ին մատնանշել խնդիրները. սա դուր չի եկել նորաթուխ «չինովնիկներին», ու սկսվել են տարատեսակ ֆուտբոլային հետապնդումներ՝ ընդհուպ մինչեւ այն, որ ՀՖՖ նախագահը կամ իրական ազդեցություն կրող տեղակալ Արմեն Նիկողոսյանը ներկա չէին գտնվում «Փյունիկի»-ի եվրոգավաթային խաղերին, ինչն ավելին է, քան խայտառակություն: Դատական հայցի պատճառ է հանդիսացել այն, որ հարցազրույցներից մեկում, քննադատելով 2019թ?-ին ստեղծված ԲԿՄԱ (Բանակի կենտրոնական մարզական ակումբ) թիմի ձեւավորման մոտեցումները, նշել է, որ կան ֆուտբոլիստներ, որոնք չեն համապատասխանում նույնիսկ այդ թիմի մակարդակին, բայց քանի որ ունեն անձնական կապեր, հայտնվում են այնտեղ: Մամուլը, համադրելով Սողոմոնյանի ասածները, հետագայում գրեց, որ խոսքը ՀՖՖ գործկոմում վերջերս հայտնված Դավիթ Սարգսյանի որդու՝Տիգրան Սարգսյանի մասին է, ում մայրը ՏԿՆ Գնել Սանոսյանի տեղակալ Քրիստինե Ղալեչյանն է: Ստացվում է, որ այսպիսով երիտասարդը, ըստ էության, ազատվել է նաեւ պարտադիր զինվորական ծառայությունից: Ուժային կառույցներից մեզ փոխանցում են, որ նյութեր են նախապատրաստվում ԲԿՄԱ-ի մասով, իսկ մեկնարկած դատական պրոցեսը կարող է հանգեցնել բունտի հայկական ֆուտբոլում: «Փյունիկ» ՖԱ-ի մանկապատանեկան թիմերից ծնողներ կան, որ նախապատրաստում են բողոքի ակցիաներ, որով կպահանջեն ՀՖՖ նախագահի հրաժարականը, ՈՒԵՖԱ եւ ՖԻՖԱ կուղարկվեն համապատասխան գրություններ, ինչպես նաեւ կբարձրացվեն ՀՖՖ ղեկավարների ու ընտանիքների անդամների կողմից վերջին մեկուկես-երկու տարում ձեռք բերված գույքի ծագման աղբյուրների մասին տեղեկություններ:

ՄԵՂԱԴՐԱՆՔ՝13 ԱՆՁԻ

ՀՀ ֆինչական կոմիտեի հատուկ հանձնարարություններով գործերի քննության վարչությունում ավարտվել է Երեւան քաղաքում եւ մարզերում 13 անձանց կողմից 155 դրվագ գողություններ, այդ թվում՝ բնակարանային, կոդողուտի եւ ավազակային հարձակում կատարելու մի շարք դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Իրականացված քննչական եւ վարութային մեծածավալ գործողությունների արդյունքում պարզվել է, որ 2019 թվականից մինչեւ 2022 թվականն ընկած ժամանակահատվածում խմբի կազմում տեխնիկական միջոցների գործադրմամբ խմբի անդամները ապօրինի մուտք են գործել ֆիզիկական եւ իրավաբանական անձանց պատկանող առեւտրի սրահներ, անձանց պատկանող բնակարաններ, որտեղից ընդհանուր կատարել են 100 դրվագից ավելի գողություններ, ինչպես նաեւ կատարել են մեկական կողոպուտ եւ ավազակային հարձակում: Վարույթն իրականացնող մարմնի միջնորդությամբ, հսկող դատախազի որոշմամբ, վերը նշված բազմաթիվ դրվագներով հանցանքների կատարման համար նշված անձանց նկատմամբ հարուցվել են քրեական հետապնդումներ:

Քրեական վարույթից 13 մեղադրյալների վերաբերյալ մաս է անջատվել, որով նախաքննությունն ավարտվել է: Նշված մասով քրեական վարույթը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել է հսկող դատախազին՝ դատարան ուղարկելու միջնորդությամբ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 3-ից 4-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 61 դեպք, որոնցից 2-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԹԻՎԸ ՆՎԱԶԵԼ Է

Հայաստանի անկախանալուց հետո Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերից, փոքր բնակավայրերից մեծ արտագաղթ է եղել: Սահմանամերձ մարզի բնակավայրերում ապրողները հայրենի շեները լքել, հեռացել են պատերազմական իրավիճակի, զբաղվածություն չունենալու, Հայաստանում տիրող անօրինականության, օտար երկրում ավելի լավ կյանք որոնելու պատճառներով: Բերդ համայնքի սահմանամերձ Մովսես գյուղից տասնյակ ընտանիքներ բնակություն են հաստատել Մոսկվայում, ուր զբաղվում են գործարարությամբ: Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Ոսկեպար գյուղից տասնյակ ընտանիքներ արտագաղթել են Ռուսաստանի Բելգորոդի մարզի Ստարի Օսկոլ քաղաք, որը ոսկեպարցիները կատակով Նոր Ոսկեպար են կոչում. ոսկեպարցիները մի քանի անգամ քաղաքի մուտքին նման գրառումով ցուցանակ են տեղադրել, որը ռուսական քաղաքի բնակիչները շպրտել են: Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ, հեռավոր Բարեկամավան գյուղում այժմ ապրողներից թվով առավել բարեկամավանցիներ ներկայումս բնակվում են Ռուսաստանի Ստավրոպոլ քաղաքում եւ Ստավրոպոլի երկրամասում: Տավուշի մարզից նաեւ ներքին արտագաղթ է կատարվել. սահմանամերձ եւ փոքր գյուղերի բնակիչները վերաբնակվել են Երեւանում, Հայաստանի այլ քաղաքներում: Տավուշի մարզի սահմանամերձ եւ փոքր գյուղերում արտագաղթի տխուր հետեւանքներն ակնառու են երեկոները, երբ թաղամասերի տներում քիչ լույսեր են վառվում, առանձնատներում ապրողներն էլ հիմնականում տարեց ամուսիններ են: Արտագաղթի հետեւանքով անցած 30 տարում նվազել է սահմանամերձ մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների թիվը: 20 տարի առաջ՝ 2002-2003 ուսումնական տարում, Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում սովորել է ընդհանուր թվով 21 հազար 896 աշակերտ, որոնց դասավանդել է 2 հազար 532 ուսուցիչ: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ ուղարկել՝ նրան հարցնելով 2022-2023, 2021-2022 եւ 2020-2021 ուսումնական տարիներին Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների թվաքանակի վերաբերյալ: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է, որ այս ուսումնական տարում Տավուշի մարզի հանրակրթական դպրոցնում սովորում է 15 հազար 805 աշակերտ. 2021-2022 ուսումնական տարում աշակերտների թիվը եղել է 16 հազար 94, իսկ 2020-2021 ուստարում՝ 16 հազար 106: Ներկայումս Տավուշի մարզի 76 հանրակրթական դպրոցներում աշխատում է 1830 ուսուցիչ եւ 218 ուսուցչի օգնական: 20 տարվա ընթացքում՝ 2003 թվականից մինչեւ 2023 թվականը, սահմանամերձ Տավուշի մարզի աշակերտների թիվը նվազել է 6 հազար 91-ով, ուսուցիչներինը՝ 494-ով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՔՐԵԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Հայաստանում կձեւավորվեն Քրեական ոստիկանության տարածքային ստորաբաժանումներ, նրանց կվերապահվի միայն ծանր ու առանձնապես ծանր հանցագործությունների քննությունը:

««Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու եւ անհետաձգելի համարելու մասին հարցն ընդունվեց կառավարության նիստում:

«Նախագծով առաջարկվում է անհրաժեշտ նախադրյալ ստեղծել Ոստիկանությունում 4 հենասյունային ուղղություններից մեկի՝ Քրեական ոստիկանության կադրերի մասնագիտական պատրաստվածության էական բարելավման եւ ծառայության գրավչության ապահովման համար: Այս առումով նախատեսվում է ստեղծել Քրեական ոստիկանության գլխավոր վարչության անմիջական ենթակայությամբ, ուղղաձիգ կառավարմամբ գործող տարածքային ստորաբաժանումներ, ինչպես այժմ գործում է Պարեկային ծառայությունը: Նրանց կվերապահվի միայն ծանր եւ առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման, օպերատիվ կանխարգելման եւ հետախուզվողների հայտնաբերման նպատակով օպերատիվ հետախուզական գործունեության իրականացումը»,- ներկայացրեց ՀՀ ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանը:

Քրեական ոստիկանության տարածքային ստորաբաժանումների ձեւավորումից հետո ներկայիս մարզային վարչությունները լուծարվելու են: Տարածքային ստորաբաժանումների ձեւավորման համար առաջարկվում է անցկացնել բաց մրցույթ:

Նախատեսվում է իրականացնել նաեւ պաշտոնային անվանափոխություն՝ օպերլիազորից անցում կատարելով քրեական ոստիկանի պաշտոնի: Կմշակվի եւ կիրականացվի քրեական ոստիկանի որակավորման մեկանգամյա նախնական կրթական ծրագիր, որին կարող են մասնակցել առնվազն բակալավրի որակավորում ունեցող քաղաքացիները եւ Ոստիկանության գործող ծառայողները: Դրանից հետո նախատեսվում է օրենսդրական փոփոխություններով սահմանել, որ Քրեական ոստիկանությունում պաշտոնի նշանակվելու պայմաններն են լինելու Պարեկային ծառայության կոնկրետ պաշտոնում ծառայության որոշակի ստաժ ու ապագայում ներդրվելիք քրեական ոստիկանի որակավորման միջին մասնագիտական կրթական ծրագրով կրթություն ստանալը: Այլ կերպ ասած՝ ոստիկանությունում ներդրվելու է բազային եւ շարունակական կրթության գաղափարը:

Քրեական ոստիկանի նախնական մասնագիտական կրթություն ստացած, ինչպես նաեւ համապատասխան վերապատրաստում անցած ծառայողները համարվելու են հավելավճարի ստացում նախատեսող ատեստավորում անցած:

Նախատեսվում է նաեւ սահմանել, որ Համայնքային ոստիկանության, Պարեկային ծառայության եւ Քրեական ոստիկանության գլխավոր վարչությունների պետերը ի պաշտոնե կհանդիսանան Ոստիկանության պետի տեղակալները, ըստ այդմ՝ առանձին տեղակալի օղակ չի լինի:

ԿԱՍԵՑՄԱՆ ՀԻՄՔԵՐ

ԲԺԻՇԿՆԵՐԸ ԿԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԵՆ

Հայաստանում ներդրվում է բուժաշխատողների անհատական լիցենզավորման համակարգ:

«Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքում եւ կից ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը հավանություն ստացավ կառավարության նիստում:

«Նախագծով առաջարկվում է ՀՀ-ում ներդնել բուժաշխատողների անհատական լիցենզավորման համակարգը: 2001թ. լիցենզավորման համակարգն ինչ-ինչ պատճառներով ՀՀ-ում կասեցվել է: Եվ այս 5 տարիների ուսումնասիրությունները, շփումները եւ ընդհանուր համակարգային փոփոխությունների մեր տեսլականը չենք կարող պատկերացնել առանց մարդկային ներուժի զարգացման, որովհետեւ բուժաշխատողներն ու նրանց նկատմամբ պահանջներն են, որ պետք է լրացնեն ընդհանուր առմամբ առողջապահական ծառայությունների որակը»,- ասաց ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը:

Նախագծով առաջարկվում է ներդնել 2 տիպի լիցենզավորման ինստիտուտ: Անցումային լիցենզավորումը վերաբերելու է օրդինատուրայում սովորող ուսանողներին: Նախարարը սա կարեւոր քայլ համարեց՝ ուսանողներին ուսումնառության ընթացքում գործնական ու աշխատանքային փորձառություն ունենալու հնարավորություն տալու առումով: «Եվ այս անցումային լիցենզիայի շրջանակներում, իհարկե, բժշկի հսկողության տակ մեր օրդինատորներն ու ռեզիդենտները հնարավորություն կունենան մասնագիտական գործունեությամբ զբաղվել եւ իրենց հմտությունները նաեւ լավացնել»,- ասաց Ավանեսյանը:

Հաջորդը կրթությունն ամբողջությամբ ստացած մասնագետների մասնագիտական լիցենզիան է: Լիցենզիաները տրվելու են 5 տարի ժամկետով: 2024թ. հունվարի 1-ից կսկսվի անհատական լիցենզիաների տրամադրումը միայն դեռ օրդինատորների համար, այսինքն՝ սահմանափակված ձեւով, այնուհետեւ՝ 2026թ. հունվարի 1-ից համակարգն ամբողջությամբ կսկսի գործել:

Անհատական լիցենզավորումն իրականացվելու է քննական ձեւով, այսինքն՝ տրամադրվելու է որոշակի հմտությունների ստուգման պարագայում: Եվ 5 տարի հետո այն թարմացվելու, շարունակվելու է, եթե դրա կասեցման հիմքեր չկան: Լիցենզավորման կասեցման հիմք կարող է հանդիսանալ, օրինակ, բժշկական սխալը, էթիկայի նորմերի խախտումները, հավաստագրման պահանջների չիրականացումը:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 12 ճՏՊ. 14 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- ք. Երեւան, Աջափնյակ, Նորաշեն թաղամաս, 18 շենք, 84 հասցեում գտնվող 61 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 20200000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Արաբկիր, 43-րդ փողոց, 42/2 շենք, 25 հասցեում գտնվող 120,0 ք.մ. կառուցվող շինություն /բնակարան/: Լոտի մեկնարկային գինը՝ 71900000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 22.05.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 22.06.2023թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

ԱՐՑԱԽԻ ԱԳՆ

ՓՈՐՁՈՒՄ Է ՋՆՋԵԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՏՔԵՐԸ

Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը խստիվ դատապարտում է Ադրբեջանի կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի պետական կոմիտեի նախագահի կողմից մայիսի 2-ին արված հայտարարությունն այն մասին, թե հայ վանականները պետք է լքեն Դադիվանքը, քանի որ այն, իբր, պատկանում է Կովկասյան Ալբանիային եւ վաղ թե ուշ կկառավարվի ալբանա-ուդիական կրոնական համայնքի կողմից:

«Ադրբեջանի պետական մարմնի ղեկավարի այդ հայտարարությունը հանդիսանում է Արդարադատության միջազգային դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 7-ի որոշման կոպիտ խախտում եւ հերթական անգամ ապացուցում է, որ Ադրբեջանի իշխանությունները ծրագրված գործողություններով քայլ առ քայլ իրականացնում են Արցախի հայաթափման, հայկական պատմամշակութային եւ կրոնական ժառանգության ոչնչացման ու յուրացման հետեւողական քաղաքականություն:

Այս համատեքստում հարկ ենք համարում հիշեցնել, որ 2020թ. նոյեմբերից Դադիվանքը գտնվում է ՌԴ խաղաղապահների վերահսկողության տակ, որոնք կոչված են ապահովելու քաղաքացիների անխափան եւ անվտանգ մուտքը սրբավայր: Ավելին՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ն՝ որպես համաշխարհային առաջատար մասնագիտացված կազմակերպություն, բազմիցս ընդգծել է, որ պատմամշակութային ժառանգությունը չպետք է քաղաքական նպատակների գործիք դառնա, եւ կոչ է արել բոլոր անդամ պետություններին հարգել այս սկզբունքն ամբողջ աշխարհում:

2020թ. պատերազմի եւ Արցախի տարածքների բռնազավթման հետեւանքով Ադրբեջանի վերահսկողության տակ են անցել շուրջ 1.5 հազար հայկական պատմամշակութային եւ կրոնական հուշարձաններ, այդ թվում՝ վանքեր, եկեղեցիներ, խաչքարեր, հնագիտական վայրեր, բերդեր, ամրոցներ, սրբավայրեր եւ այլն:

Ագրեսիայի 44 օրերի ընթացքում Ադրբեջանի զինված ուժերը դիտավորյալ թիրախավորել, ոչնչացրել կամ պղծել են բազմաթիվ հուշարձաններ եւ սրբավայրեր, իսկ պատերազմից անմիջապես հետո Ադրբեջանի բարձրագույն ղեկավարությունը նախաձեռնել է հայկական պատմական եւ կրոնական ժառանգության «ալբանիզացման» քաղաքականություն՝ փորձելով ջնջել Արցախում հայկական հազարամյա ներկայության բոլոր հետքերը, ինչպես նաեւ, կեղծ պատմական թեզեր առաջ քաշելով, արդարացնել հայկական հուշարձանների ոչնչացումը կամ այլափոխումը: Մասնավորապես, 2021թ. Հադրութի շրջանի Ծակուռի գյուղ այցելության ժամանակ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը, մատնացույց անելով Ծաղկավանքի Սբ. Աստվածածին եկեղեցու (XII դ.) հայերեն գրությունները, նշել է, թե դրանք կեղծ են, եւ անձամբ հրամայել է ջնջել այդ գրությունները: Ավելի ուշ Ադրբեջանում նույնիսկ ստեղծվել է «ալբանական պատմության եւ ճարտարապետության մասնագետների» աշխատանքային խումբ, որի նպատակն էր, այսպես կոչված, «ալբանական տաճարներից» հեռացնել «հայերի թողած կեղծ հետքերը»: Ադրբեջանական վանդալիզմի վառ օրինակներից են նաեւ պատերազմի ժամանակ Շուշիի Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու ռմբակոծումը, իսկ այնուհետեւ վերանորոգման քողի տակ իրականացվող այլափոխումը, Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու (Կանաչ ժամ) ոչնչացումը, Մեխակավանի հայկական Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու ամբողջական ավերումը եւ այլն: Վանդալիզմի այս բոլոր դեպքերը, ինչպես նաեւ Արցախի գրավյալ տարածքներում մշակութային օբյեկտների եւ հուշարձանների վիճակի գնահատման եւ դրանց պահպանության նպատակով ՅՈՒՆԵՍԿՕ-ի առաքելության մուտքը մերժելու Ադրբեջանի հետեւողական քաղաքականությունը վկայում են, որ Արցախի օկուպացված տարածքներում հայկական պատմամշակութային եւ կրոնական կոթողները վտանգված են. դրանք կամ այլափոխվում, կամ ոչնչացվում են Ադրբեջանի վարած հայատյաց պետական քաղաքականության հետեւանքով: Այսպիսով, Ադրբեջանը, փորձելով ամեն կերպ դուրս մղել արցախցիներին իրենց պատմական հայրենիքից, Արցախի դեմ վարում է ոչ միայն էթնիկ զտման, այլ նաեւ մշակութային ցեղասպանության քաղաքականություն»,- նշված է Արցախի ԱԳՆ-ի տարածած հայտարարության մեջ: Երկրի արտաքին գերատեսչությունը կրկին դիմում է ամբողջ միջազգային հանրությանը, համապատասխան բոլոր միջազգային կառույցներին եւ, առաջին հերթին, ՅՈՒՆԵՍԿՕ-ին՝ հորդորելով ձեռնարկել հրատապ եւ արդյունավետ քայլեր՝ ապահովելու միջազգային առաքելությունների եւ համապատասխան փորձագետների մուտքն Արցախի գրավյալ տարածքներ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած հայկական պատմամշակութային օբյեկտների ու հուշարձանների վիճակը գնահատելու եւ դրանք միջազգային պաշտպանության տակ առնելու նպատակով:

ԼՈՒՐԵՐ

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

Հայաստանում առաջարկվում է միջպետական, հանրապետական նշանակության ճանապարհների միջին նորոգման համար հատկացնել 382 մլն դրամ գումար:

«Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի համապատասխան որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ եւ գնման պայմանագրերում փոփոխություններ կատարելու թույլտվություն տալու մասին նախագիծը հավանություն ստացավ կառավարության նիստում:

«Նախագծով առաջարկվում է միջպետական, հանրապետական ճանապարհների միջին նորոգման համար գումար հատկացնել՝ 382 մլն դրամ: Դա մի քանի նախագծերի, հիմնականում՝ նախորդ տարի իրականացված եւ չավարտված նախագծերի համար է: Մասնավորապես՝ 382 մլն-ից 135 մլն-ը 3 ծրագրերի համար է՝ մեկը՝ Սյունիքի մարզում Գորիսից դեպի Տեղ գյուղ հատվածի աշխատանքներն ավարտելու, մյուսը՝ Իսահակյան-Գյումրի ճանապարհի Արտենի-Արագածավան-Թլիկ բնակավայրերի հատվածում, երրորդը՝ Մ2 ճանապարհից դեպի Ջերմուկ հատվածի աշխատանքներն ավարտելու համար»,- ասաց ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը:

Նախարարը հայտնեց, որ այս հատվածներում հիմնական ասֆալտապատման աշխատանքները նախորդ տարի ավարտվել են, բայց գծանշման եւ որոշակի այլ աշխատանքներ են մնացել:

Միջին նորոգման աշխատանքները ենթադրում են ասֆալտի վերին շերտի՝ 4-6 սմ հաստությամբ հեռացում եւ նոր շերտի տեղադրում: Սանոսյանի խոսքով՝ դրանով 5-7 տարով երկարացվում է ճանապարհի կյանքը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարություն

2023 թվականի մայիսի 22-ին գումարվելու է «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի՝ 2022թ. տարեկան ընդհանուր ժողով՝ համատեղ ներկայության կարգով իրական ժամանակի ռեժիմում, Zoom հավելվածի միջոցով:

«Յունիբանկ»-ը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆՈՒՄ ՆՇՎՈՒՄ Է ՌԱԽՄԱՆԻՆՈՎԻ 150-ԱՄՅԱԿԸ

Ականավոր կոմպոզիտոր, դաշնակահար եւ դիրիժոր Սերգեյ Ռախմանինովի երաժշտությամբ սերունդներ են կրթվում: Բազմաթիվ երաժիշտներ փորձում են գերազանցել նրա կատարողական վարպետությունը, սակայն փչերին է դա հաջողվում: Իսկ այն, որ Ռախմանինովի երաժշտությունը հավերժ է, փաստում են դասականների նվագացանկերը, որոնցում նրա գործերն ուրույն տեղ են զբաղեցնում: Մեծն կոմպոզիտորի ծննդյան 150-ամյակի առթիվ մայիսի 3-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում «Ռախմանինով. ռուս կոմպոզիտոր, աշխարհի քաղաքացի» խորագրով քննարկում անցկացվեց՝ մշակույթի ոլորտի տարբեր գործիչների մասնակցությամբ: Ակադեմիայի հայագիտության եւ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանի խոսքով՝ Ռախմանինովն իր հանճարեղ սիմֆոնիկ, օպերային եւ այլ ստեղծագործություններով հարստացրել է ոչ միայն ռուս, այլեւ համաշխարհային երաժշտարվեստը: «Ռախմանինովն իր ստեղծագործական գործունեությամբ անդրադարձել է հայ գրականությանը, մասնավորապես՝ Ավետիք Իսահակյանի պոեզիային: Մեծանուն կոմպոզիտորի գործերը հայ կատարողների նվագացանկի անբաժանելի մասն են եղել»,- ընդգծեց Սուվարյանն ու հավելեց՝ հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամությունը դարավոր պատմություն ունի, որում յուրահատուկ տեղ են զբաղեցնում գիտական ու մշակութային փոխհարաբերությունները:

Ակադեմիկոսն ասաց, որ այդ կապերն ամուր են եղել հատկապես երաժշտարվեստում, եւ հիշեցրեց, որ մեծանուն կոմպոզիտորներ Մակար Եկմալյանը, Ալեքսանդր Սպենդիարյանը, Արամ Խաչատրյանը եւ այլք ռուսական երաժշտական բուհերի շրջանավարտներ են եղել, իսկ ջութակահար Հովհաննես Նալբանդյանը, երգիչ Բեգլար Ամիրջանյանն ու այլք իրենց կատարողական գործունեությամբ նպաստել են ռուսական երաժշտության զարգացմանը:

Ռուսաստանի երաժշտության ազգային թանգարանում է պահվում Ռախմանինովի ժառանգության մի մեծ մաս՝ 3700 նմուշ, սակայն ամեն անգամ նորություններ են գտնում: Միխայիլ Բրիզգալովը վստահեցրեց, որ Ռախմանինովը դեռ շատ երկար տարիներ, դարեր կապրի, քանի որ նրա երաժշտությանը սիրահարվում են անմնացորդ, այն երբեք ոչ ոքի անտարբեր չի թողնում:

Ռախմանինովի հոբելյանի առթիվ մայիսի 2-ին Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում բացվել է նրան նվիրված «Սերգեյ Ռախմանինով. ես ռուս կոմպոզիտոր եմ» ցուցահանդեսը, որում ընդգրկված են Ռախմանինովի արխիվից հազվագյուտ փաստաթղթեր եւ լուսանկարներ, նրա ընտանիքի ծագումնաբանական ծառը եւ ստեղծագործությունների ձեռագրերը: Ներկայացված է նաեւ մուլտիմեդիա բովանդակություն. QR կոդերի միջոցով այցելուները կկարողանան լսել Սերգեյ Ռախմանինովի ամենահայտնի ստեղծագործությունների արխիվային ձայնագրությունները՝ հեղինակի եւ նշանավոր երաժիշտների կատարմամբ: Դաշնակահար, տուն-թանգարանի տնօրեն Արմինե Գրիգորյանը նշեց՝ դեռ տասը տարի առաջ թանգարանը Ռուսաստանի երաժշտության ազգային թանգարանի հետ համագործակցության պայմանագիր է կնքել, որի շրջանակում իրականացված առաջին նախագիծը Ռախմանինովին եւ Շալյապինին է նվիրված եղել եւ յուրահատուկ ցուցանմուշներով ցուցադրություն է բերվել Երեւան: «Այս տարի կրկին դիմեցի Միխայիլ Բրիզգալովին ու Ռախմանինովի 150-ամյակի առթիվ խնդրեցի մեզ ցուցադրության նյութեր տրամադրել, եւ նա անձամբ եկավ ցուցադրության բացմանը, որին հաջորդած համերգային ծրագրում հնչեցին կոմպոզիտորի ստեղծագործությունները»,-շեշտեց նա:

Գրիգորյանն իրեն կոմպոզիտորի մեծ երկրպագու է համարում եւ մշտապես կատարում է նրա դաշնամուրային ստեղծագործությունները: Միջոցառմանը ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի եւ Ռուսաստանի երաժշտության ազգային թանգարանի միջեւ համագործակցության համաձայնագիր կնքվեց: Կողմերը վստահեցրին, որ ձեռք բերված համաձայնագրի արդյունքները երկար սպասել չեն տա:

ՏԵՎԱԿԱՆ ԴԱԴԱՐ

ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻՆ ՀԱՆԴԵՍ ԿԳԱ ՀԱՄԵՐԳՈՎ

Մշակութային գործիչ, կոմպոզիտոր, երգիչ Վահան Արծրունու ARTSRUNI Progressive Music Act նախագիծը տեւական դադարից հետո հանդես կգա բացառիկ համերգով: 2003 թվականին եվրոպական Un Voyage en Progressif-ի կողմից 10 լավագույն եվրոպական պրոգրեսիվ խմբերի ցուցակում ընդգրկված թիմը համերգը կնվիրի այդ ճանապարհից իրադարձության 20-ամյակին: Համերգը կկայանա մայիսի 17-ին՝ ժամը 20:00-ին, Hard Rock Yerevan-ում: Խմբի կազմում հանդես են գալիս Վահան Արծրունին (վոկալ, ակուստիկ կիթառ), Նելլի Մանուկյանը (ֆլեյտա), Վահագն Ամիրխանյանը (սոլո կիթառ), Արթուր Մոլիտվինը (բաս կիթառ), Լեւոն Հախվերդյանը (հարվածայիններ):

«Խումբը հիմնադրվել է 2000 թվականին, ակտիվ գործունեություն է ծավալել, առաջարկ է ստացել եվրոպական հայտնի MUSEA Records-ից թողարկել երկու ալբոմ: Երկուսն էլ թողարկվել են 2002-ին Ֆրանսիայում՝ արժանանալով քննադատների բարձր գնահատականին: Մեր խումբն առաջինն էր, որ պրոգրեսիվ երաժշտությունը ներկայացրեց Հայաստանի սահմաններից դուրս: Տեւական ժամանակ է, ինչ միասին համերգով հանդես չէինք եկել երաժիշտներից մեկի՝ Հայաստանից բացակայելու պատճառով: Որոշեցինք օգտագործել եվրոպական պրոգրեսիվ խմբերի լավագույն տասնյակի ցուցակում ընդգրկվելու իրադարձային առիթն ու հանդես գալ համերգով»,-նշել է Վահան Արծրունին՝ ընդգծելով, որ համերգն անտարբեր չի թողնի ունկնդրին: Մայիսի 17-ի երեկոյի ծրագրում ընդգրկված են Վահան Արծրունու գործիքային ստեղծագործություններն ու երգերը: ARTSRUNI Progressive Music Act-ը հանդես է եկել թե՛ մենահամերգներով, թե՛ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի նվագախմբի եւ երգչախմբի, Հայաստանի պետական կամերային նվագախմբի եւ այլ կոլեկտիվների հետ:

ԼՈՒՐԵՐ

ԱՄԵՆԱԳԵՂԵՑԻԿ ՏԱՃԱՐՆԵՐԻՑ

Luxatic պորտալը Երեւանում գտնվող Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր տաճարը ներառել է աշխարհի 25 ամենագեղեցիկ տաճարների ցանկում:

«Սա մեր ցանկի նորագույն տաճարներից է՝ կառուցված Վազգեն Ա կաթողիկոսի նախաձեռնությամբ: Հայտնի է նաեւ որպես Երեւանի Մայր տաճար. այն Հայ Առաքելական Եկեղեցու ամենամեծ տաճարն է աշխարհում: Համալիրը բաղկացած է երեք եկեղեցիներից: Հայկական ավանդական ճարտարապետական ոճով կառուցված տաճարը երկրի ամենաշատ այցելվող եկեղեցին է»,- նշում է հրատարակությունը:

ՁԱՐԴԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ

Ֆրանսիական Saint Laurent նորաձեւության տունը ներկայացրել է իր դեբյուտային զարդերի հավաքածուն:

Նորաձեւության տան առաջին հավաքածուի հիմնական շարժառիթներն էին Cassandre-ն, որը YSL-ի տարբերանշանն է, եւ Le Maillon-ը՝ խոշոր օղակների շղթաները: Դրանք առկա են թեւնոցներում, վզնոցներում, մանժետներում, մատանիներում եւ ականջօղերում:

Ոսկերչական իրերը պատրաստված են դեղին եւ սպիտակ 18 կարատանոց ոսկուց եւ ադամանդներով:

Ոսկերչական իրերի գները տատանվում են $790-ից YSL ոսկյա գամասեղ ականջօղերի համար մինչեւ $48,000 մեծ ոսկյա շղթայի ապարանջանների համար:

Նորաձեւության տունն իր զարդերը համարում է ֆունկցիոնալ, դասական եւ կոլեկցիոներ:

Տան գովազդային արշավը նկարահանել է հայտնի լուսանկարիչ Յուրգեն Թելլերը: Լուսանկարներում նուրբ տրիկոտաժով մոդելները կառավարվում են ձեռքերով, որոնք զարդարված են բազմաթիվ մեծ ապարանջաններով, պարտեզի գործիքներով:

51 ԳՈԼ՝ ԸՆԹԱՑԻԿ ՄՐՑԱՇՐՋԱՆՈՒՄ

«Մանչեսթեր Սիթիի» 22-ամյա նորվեգացի հարձակվող Էրլինգ Հոլանդը ընթացիկ մրցաշրջանում խփել է 51 գոլ: Նա այդ ցուցանիշին հասած երկրորդ ֆուտբոլիստն է Անգլիայի ուժեղագույն դիվիզիոնի ակումբների պատմության մեջ:

Ռեկորդակիրը Դիքսի Դինն է, որը 1927-1928 թվականների մրցաշրջանում «Էվերտոնի» կազմում խփել է 63 գոլ:

Անգլիայում առաջին մրցաշրջանն անցկացնող Հոլանդը 51 գոլը խփել է բոլոր մրցաշարերի 45 խաղում: Այս մրցաշրջանում Հոլանդը 35 գոլ է խփել Պրեմիեր լիգայում, 12 գոլ՝ Չեմպիոնների լիգայում, 3 գոլ՝ Անգլիայի գավաթի խաղարկությունում, 1 գոլ՝ Անգլիական լիգայի գավաթի խաղարկությունում:

● *Մայիսի 6-ին «Հայ-Արտ» մշակութային կենտրոնում տեղի կունենա «Վան Գոգ եւ Բենքսի» ցուցադրությունը: Տոմսերի արժեքը՝3000-3500 դրամ: Սկիզբը՝ամեն օր՝ժամը 10:00-ից 21:00-ն:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀԱՐԿԵՐ

ՀԱՐՑ. Ուզում եմ տեղեկանալ՝ Ավելացված արժեքի հարկ վճարող կազմակերպությունը պարտավոր է պահպանել ստացված հարկային հաշիվները, եւ եթե այո, ապա ինչ ժամկետով:

Սյուզաննա Մանուչարյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ս. Մանուչարյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի՝ Ավելացված արժեքի հարկ վճարող կազմակերպությունը պարտավոր է առնվազն մինչեւ ստացման տարվան անմիջապես հաջորդող հինգ տարին լրանալը պահպանել ստացած հարկային հաշիվները (այդ թվում՝ սահմանված ձեւով հաստատված էլեկտրոնային հարկային հաշիվները) կամ ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերը:

Հարկային հաշիվների, դրանց դիմաց վճարումը հաստատող փաստաթղթերի, մաքսային հայտարարագրերի պահպանման ժամկետները չեն կարող պակաս լինել ԱԱՀ-ի գծով պարտավորությունների, հաշվանցումների կամ վերադարձների հաշվին հարկային հաշվում կամ մաքսային հայտարարագրում առանձնացված ԱԱՀ-ի գումարի՝ օրենքով սահմանված կարգով մարման ժամկետից ձեռք բերված ապրանքների եւ ստացված ծառայությունների մասով հաշվանցումների դեպքում:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ ԱԱՀ վճարող անձանց կողմից արտադրական եւ այլ առեւտրային նպատակներով ձեռք բերված ապրանքների կորստի դեպքում մատակարարներին (օրենքով սահմանված դեպքում՝ մաքսային սահմանին) վճարված (հարկային հաշիվներում կամ մաքսային փաստաթղթերում առանձնացված) ԱԱՀ-ի գումարները ենթակա չեն հաշվանցման կամ վերադարձման, եթե այդ կորուստները շահութահարկով հարկման նպատակով չեն դիտվում որպես համախառն եկամտից նվազեցում:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՕՐԵՆՔ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչ կարգով է օրինականացվում ինքնակամ կառույցը:

Արմեն Հարությունյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ինքնակամ կառույցները կարող են ճանաչվել օրինական համայնքների ղեկավարների, համայնքի վարչական տարածքներից դուրս մարզպետների կողմից՝ կառավարության սահմանած կարգով: Ինքնակամ կառույցը կարող է ճանաչվել օրինական միայն այն անձի դիմումով, որին սեփականության իրավունքով պատկանող հողամասում գտնվում է այդ կառույցը: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում կառուցված կամ վերակառուցված ինքնակամ կառույցների նկատմամբ ճանաչվում է պետության կամ համայնքի սեփականությունը՝անկախ նրանից, թե ով է այն կառուցել: (ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշում, ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 731-Ն որոշում):

ՀՀ կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ինքնակամ կառույց է համարվում օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի եւ կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Երեկ Կառավարության շենքի մոտ զոհված զինծառայողների ծնողները բողոքի ակցիա են կազմակերպել: ArmLur.am-ը զրուցել է նրանց հետ՝ պարզելու, թե ինչի համար են հավաքվել: Ակցիայից հետո ծնողները շարժվեցին Շառլ Ազնավուրի անվան հրապարակ՝մասնակցելու ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանի կազմակերպած ստորագրահավաքին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 2 + 2 +14 + 18
Կոտայքի լեռներ	- 2 + 2 +13 + 16
Կոտայքի նախալեռներ	+ 5 + 7 +18 + 20
Գեղարքունիք	0 + 4 +13 + 18
Լոռի	+ 2 + 6 +12 + 18
Տավուշ	+ 3 + 8 +20 + 24
Արագածոտնի լեռներ	- 1 + 3 +13 + 16
Արագածոտնի նախալեռներ	+ 5 + 8 +18 + 23

Արարատ	+ 7 + 10 +24 + 26
Արմավիր	+ 6 + 8 +24 + 26
Վայոց ձորի լեռներ	- 1 + 2 +14 + 16
Վայոց ձորի նախալեռներ	+ 5 + 5 +19 + 23
Սյունիքի հովիտներ	+ 8 + 11 +23 + 28
Սյունիքի նախալեռներ	+ 3 + 6 +17 + 20
Արցախ	+ 7 + 11 +20 + 25
Երեւան	+ 7 + 9 +21 + 23

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **4.5.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*